ՊՐՈՖ. Ա. ՂԱՐԻԲՅԱՆԻ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ» ՁԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Հայկական ՍՍՌ ԳԱ թղթակից անդամ Ա. Ղարիբյանի զեկուցումը, կարդացված Ակադեմիայի 1917 թ. Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ Ռևոլյուցիայի 30-ամյակին նվիրված հոբելյանական սեսիայի նոյեմբերի 26-ի նիստում և տպագրված «Տեղեկագրի» 1-ին համարում, պարունակում է մի շարք անճշտություններ և սխալ ձևակերպումներ։

Խոսելով մարքսիզմի առաջացման մասին, հեղինակն այնպես է պատկերացնում, թե մարքսիզմի «պայծառ լույսի տակ չքացան ու շարունակում են չքանալ մարդու գիտակցության վրա ճնշող բոլոր մութ և տերտերական տեսությունները, մարդատեցությամբ լի դաժան շահագործական հարաբերությունները հիմնավորող... բոլոր տեսական, փիլիսոփայական, պատմական և այլ «կգրունքները» (էջ 17)։ Մարքսիզմը «ռևոլյուցիոն դասակարգի ռևոլյուցիոն ուսմունք է, կոչված աշխարհը փոխելու։ Նա տևական ու մեծ պայքարի բռնվեց բուրժուական ուսմունքների դեմ, մի պայքար, որն այսօր էլ առավել մեծ սրությամբ շարունակվում է՝ ընդգրկելով կյանքի, տնտեսության, քաղաքականության, գիտության, կուլտուրայի և արվեստի բոլոր բնագավառները։ Այդ պայքարն այնքան հեշտ ու դյուրին չէ, ինչպես պատկերում է հեղինակը։

Իրավացի չէ հեղինակը, երբ մարքսիզմին նախորդող շրջանում գիտության պատմության նվաճումները անվերապահորեն չակերտների մեջ է առնում ու անճիշտ ձևակերպումով է բերում այն հայտնի թեզը, թե ամեն ժողովրդի կուլտուրայի մեջ պետք է տեսնել երկու կուլտուրա՝ դեմոկրատական, առաջավոր կուլտուրա և իշխող դասակարգի ռեակցիոն կուլտուրան (տես էջ 17—18)։

Մարքսիզմը ներկայացված է որպես «հայտնագործություն», որը «պրոլետարական ռևոլյուցիայի պրակտիկայում կատարելագործվեց» (էջ 17)։ Այս ձևակերպումն արատավոր է, կատարելագործվում են անկատար հայտնագործությունները, մարքսիզմը ռևոլյուցիոն ուսմունք է, նա նոր պայմաններում զարգացվում է և նոր աստիճանի վրա բարձրացվում։

Մարքսի հայտնի թեզը, թե՝ «փիլիսոփաները միայն տարբեր կերպով բացատրել են աշխարհը, բայց խնդիրն այն փոխելն է», կամայականորեն փոխակերպված և անճիշտ ձևակերպումով է բերված (էջ 17)։

Ենկեր Ստալինն ասում է. «ազգը— դա, ամենից առաջ, ընդհանրություն է, մարդկանց որոշ ընդհանրություն։ Այդ ընդհանրությունը ոչ ռասայական է և ոչ ցեղականն։ Այս մի մեծ գիտական ընդհանրացում է և վերաբերում է բոլոր ազգերին, իսկ պրոֆ. Ղարիբյանը անիրավացի կերպով սահմանափակելով տարածում է միայն հնդեվրոպական համարված ազգերի վրա (էջ 25)։

Սկզբունքային ճիշտ դիրքերից քննադատելով հնդեվրոպաբանությունը և նրա կոնցեպցիան ժողովուրդների և նրանց լեզուների առաջացման, մասնավորապես հայ ժողովրդի և հայերեն լեզվի առաջացման վերաբերյալ, պրոֆ. Ղարիբյանը մեղանչում է պատմության մատերիալիստական դիալեկտիկական ըմբռնման առաջ, երբ փորձում է շարադրել հայ ժողովրդի և հայերենի առաջացման, ինչպես և հայերեն լեզվի անցած փուլերի հարցերը։

«Հայ ժողովրդի առաջացման պրոցեսը դիտված է սխեմատիկ կերպով. համաձայն այդ սխեմայի տասնյակ և, նույնիսկ, հարյուրավոր ցեղեր ապրում են կողք կողքի, մոդուսիկ կերպով, ապա փոխադարձաբար ներթափանցում են, ձուլվում՝ չնորհիվ այն բանի, որ ցեղերի և տոհմերի մեջ պատմականորեն ընդհանրություններ են գոյանում, որոնց հիման վրա առաջանում է ժողովուրդը։

Հայաստանի տերիտորիայի վրա ապրող հարյուրից ավելի ցեղերից ու տոհմերից էլ «7—2 դարերում դասակարգային հասարակական հարաբերությունների հիման վրա կազմավորվել է հայ ժողովուրդը» (էջ 27)։ Հարյուրավոր ցեղերից ժողովուրդներ չեն գոյանում, այդ ցեղերը անցնելով հասարակական պատմական զարգացման մի տևական պրոցես պետք է միավորվեին ցեղային խմբակցությունների, ապա ազգամացեզային միությունների մեջ, իսկ պետության և ժողովրդի կազմավորման պրոցեսում պետք է այդ ցեղային միություններից առավել առաջադիմած և առավել հզոր մեկ-երկու մեծ միություն հանդես գային ասիմիլյացիա կատարողի պրիմատ և վճռական դերով՝ կազմելով ձևավորվող պետության և ժողովրդի կորիզը։ Դա մի բարդ և տևական պրոցես է և սովետական հայագետի խնդիրն է մարքսիստական մեթոդոլոգիայի լույսի տակ բացահայտել այդ պրոցեսը փաստական հարուստ ու բազմակողմանի նյութի հիման վրա։

Գծելով սոցիոլոգիական այդպիսի սխեմա և ավելացնելով, թե հայ ժողովուրդը առաջացավ «նախնական ֆեոդալական հասարակու-

թյան դոյացման հրման վրա» (էջ 26), պրոֆ. Ղարիբյանը հավատացնում է, թե դա սովետական հայագիտության տեսակետն է, արտահայտված դեռ 1932 թվին իր կողմից), որը հիմնավորվեց հետագայի մի շարք նոր ուսումնասիրություններով։ Նախ՝ նկատենք, որ Ն. Մարը դեռ 1928 թ. սկզբունքորեն ժխտեց հայ ժողովրդի ներդաղթը[1] և Մարի աշակերտ ակադ. Ի. Մեշչանինովն էլ 1931 թ. քննադատության ենթարկեց Մարկվարտի միգրացիոն տեսությունը հայ ժողովրդի առաջացման մասին։ Մյուս կողմից, հարկ կա՞ արդյոք ապացուցելու, թե սովետական հայագիտությունը չի առաջնորդվել պրոֆ. Ղարիբյանի սխեմայով, ինչպես և չի ընդունում այն տեսակետը, թե 7—2 դարերում Հայաստանում նախնական ֆեոդալական հասարակություն է դոյանում։

Նույնպիսի սխեմայով է բացատրված նաև հայերենի առաջացումը (տես էջ 20, 28), ըստ որում՝ պրոֆ. Ղարիբյանի կարծիքով, կազմավորվող էթնոսի լեզվական ընդհանրությունն «առաջանում է երկար ժամանակվա պրոցեսում՝ ցեղատոհմային պատմական հարաբերությունների ընթացքում»։ Նկատենք, որ ցեղատոհմային հարաբերությունների ընթացքում լեզվական ընդհանրություն առաջանում է ցեղային խմբակցությունների շրջանակներում, իսկ ժողովուրդների ընդհանուր լեզուն՝ առաջանում է ժողովրդի կազմավորման և դասակարգային հասարակության ու պետության առաջացման պրոցեսում։

Պրոֆ. Ղարիբյանը բազիսի և վերնաշենքի դիալեկտիկական միասնության և փոխադարձ ներգործության սկզբունքը խորը կերպով չի կիրառում քննարկվող հարցերում, անտեսում է բազիսի և վերնաշենքի փոխազդեցությունների դիալեկտիկական անցումները։ Առանձին վերնաշենքային երևույթներ անմիջապես բխեցվում են արտադրողական ուժերի զարգացման աստիճանից, «արտադրական աշխատանքով տրոհություն կազմակերպելու այս կամ այն եղանակից», արտադրական շահագրգռվածությունից և այլն (էջ 16, 20, 21, 26)։ Նման մոտեցմամբ անտեսվում է առանձին վերնաշենքային երևույթների համեմատական ինքնուրույնությունը։

Մի տեղ տոհմի, ցեղի, ժողովրդի և ազգի առաջացումը բացատրվում է միայն արտադրողական ուժերի զարգացման այս կամ այն աստիճանով (էջ 16)։ Դա պակասավոր բացատրություն է։ Ըստ պրոֆ. Ղարիբյանի մարդկային միավորումներ հանդիսացող հորդաները կամ տոտեմները (sic!) ապրել են մարդ դառնալու պրոցես (հորդան ու տոտեմը մարդ են դառնում. sic!) դոյանում են տոհմական կամ ցեղային միավորներ։ Այնուհետև տոհմական հարաբերությունների բայրայման հիման վրա,— ասում է զեկուցման հեղինակը,— առաջացել է աշխատանքի հասարակական բաժանում (1-ին և 2-րդ) և դրա հիման վրա կազմավորվել են դասակարգային հասարակությունները...» (էջ 20)։ Այստեղ պատճառը և հետևանքը շփոթված են և նախադասությունն էլ այնպես է կառուցված, որ դուրս է գալիս, որ դասակարգային հասարակությունները առաջացել են միայն աշխատանքի բաժանման հետևանքով։ Ժողովրդի և պետության կազմավորման պրոցեսում «արտադրապես շահագրգռված այլամերժ տարրերը,— ասում է պրոֆ. Ղարիբյանը,— տնտեսություն կազմակերպելու անհրաժեշտությունից կարող են միանալ և մի հասարակություն կազմել։ Այդ ընթացքում, երբ պետք է լինում, շատ արագ կերպով վերանում են և՛ լեզվի տարբերությունը, և՛ կենցաղի տարբերությունը, և՛ իդեոլոգիայի տարբերությունը...» (էջ 26)։ Տարակույս չկա, որ այստեղ անտեսված են շատ կարևոր հանգամանքներ և հարցը խիստ «պարզեցված» է ու հեշտացված։

Այս ձևով է ներկայացված նաև սովետահայ գրական լեզվի և հայերեն բարբառների հարաբերությունը։ Պրոֆ. Ղարիբյանը իսպառ ջնջում է սովետահայ գրական լեզվի և բարբառների միջև եղած հակասությունները (էջ 37)։ Նույն ձևով է գրված համաշխարհային ընդհանուր լեզվի առաջացման հարցը (էջ 21 և 37)։ Ըստ Պրոֆ. Ղարիբյանի դուրս է գալիս, որ «այսուհետև [այսօրվանից] մեր [սովետահայ] գրական լեզուն պիտի ապրի որպես համաշխարհային, համամարդկային լեզվի մի տարբերակ» (էջ 37)։ «Պարզեցվում» և այժմեականացվում է հեռավոր ապագայի բարդ հարցը, որը տեսական պատմական պրոցեսի արդյունք է հանդիսանալու համաշխարհային մասշտաբով կոմունիզմի հաղթանակից էլ հետո՝ կոմունիստական հասարակության մեջ։

Պրոֆ. Ղարիբյանը սխալ է բնութագրում Հայաստանի հասարակական հարաբերությունները 11—13-րդ դարերում։ Նրա կարծիքով այս դարերում «փոխվում են հասարակական հարաբերությունները» (էջ 36), «հայ հին ֆեոդալական հասարակությունը ներքին և արտաքին հակասություններից, ինչպես և արտաքին ուժերի նվաճումների ճնշումից կործանվում է... (sic!) «կազմավորվում է նոր հասարակություն (sic!) իր նոր, «միասնական լեզվով»

[1] Н. Я. Марр—Яфетическая теория, Баку, 19 8 г., стр. 9

[2] Տես՝ Сообщение ГАИМК, 1931 г., № 9—10, էջ 35

(sic!), «իշխող դասակարգն իր տեղը դիջում է մի նոր իշխող դասակարգի» (sic!), «հասարակական շահագործական հարաբերությունները չեն վերանում, նրանք վերարտադրվում են ֆեոդալիզմի քայքայման տիպի որակով և առաջացնում ճորտատիրական դասակարգ», և այլն, և այլն (էջ 35—36)։ Պրոֆ. Ղարիբյանն այս հարցում մեղանչում է պատմական ճշմարտության առջև։

Նշրակացություններ պարզ է. պրոֆ. Ա. Ղարիբյանի զեկուցումը լուրջ թերություններ է պարունակում և չպետք է տպագրության հանձնվեր առանց վերամշակման։

Ռ. ԱՌԱՔԵԼՅԱՆ